

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը եւ Բելառուսի Հանրապետության վիճակագրության եւ վերլուծության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր, հիմնվելով վիճակագրության բնագավառում համագործակցության զարգացման եւ երկու պետությունների վիճակագրական մարմինների փոխգործունեության ակտիվացման փոխադարձ շահագրգռվածության վրա,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՅՈՒՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն հետեւյալ հիմնական ուղղություններով.

վիճակագրական ցուցանիշների համակարգերի ստեղծման եւ գործունեության մեթոդաբանական մշակումների, վիճակագրական դիտարկումների անցկացման, այդ թվում՝ մարդահամարների, առավել կարելի ընտրանքային հետազոտությունների եւ բնակչության հարցումների ծրագրերի եւ մեթոդների փոխանակում,

վիճակագրական տեղեկության փոխանակում Կողմերի կողմից համաձայնեցված թեմաներով,

վիճակագրական հրատարակությունների եւ հրապարակումների (տարեգրքերի, ժողովածուների, տեղեկագրերի պետությունների եւ առանձին տարածաշրջանների սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ հաղորդագրությունների եւ ակնարկների) փոխանակում,

ըստ "Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի" չորսանիշ կոդերի՝ ապրանքների եւ ծառայությունների արտահանման եւ ներմուծման վերաբերյալ տեղեկության փոխանակում եւ տվյալների համադրում հայելային վիճակագրության մեթոդով,

ըստ համապատասխան միջպետական համաձայնագրերում նախատեսված անվանացանկի եւ ժամկետների՝ ինվեստիցիոն եւ սպառողական ապրանքների մատակարարման վերաբերյալ տեղեկության հավաքագրման կազմակերպում եւ փոխանակում,

վիճակագրության բնագավառում համակարգիչների, տեղական ցանցերի եւ ծրագրային մշակումների օգտագործման փորձի փոխանակում, տվյալների ավտոմատացված բանկերի ստեղծման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործում փոխադարձ օգնության ցուցաբերում,

ազգային հաշիվների եւ միջազգային նորմերին համապատասխանող այլ հաշվառման եւ վիճակագրության համակարգերի ներդրման եւ կատարելագործման գործում փորձի փոխանակում եւ փոխադարձ օգնության ցուցաբերում, ինչպես նաեւ համապատասխան ծրագրերի ու նախագծերի մշակումների ընթացքի եւ իրականացման վերաբերյալ տեղեկության փոխանակում,

գների վիճակագրության, համապատասխան վիճակագրական ցուցանիշների հաշվարկի մեթոդաբանության բնագավառներում փորձի փոխանակում եւ փոխադարձ օգնության ցուցաբերում, սպառողական ապրանքների եւ ծառայությունների գների ու սակագների մակարդակի փոփոխման, բնակչության կենսամակարդակի եւ սոցիալ-տնտեսական զարգացման այլ ցուցանիշների վերաբերյալ տվյալների փոխանակում,

սպառողական, ինվեստիցիոն ապրանքների եւ ծառայությունների գների, ինչպես նաեւ համախառն ներքին արդյունքի հիմնական բաղադրամասերի միջազգային համադրումների իրականացում կանոնավոր հիմունքներով եւ տարադրամի գնողունակության համարժեքության որոշում ԱՊՀ երկրների համադրումների ծրագրի շրջանակում,

բնակչության զբաղվածության եւ գործազրկության վերաբերյալ տվյալների փոխանակում,

փորձի փոխանակում արտաբյուջետային ֆինանսավորման ձեւավորման հարցերով, պայմանագրային հիմունքներով վիճակագրության բնագավառում համատեղ գիտական հետազոտությունների եւ կիրառական մշակումների, փոխադարձ հետաքրքրություններ կայացնող հիմնախնդիրների այլ միջոցառումների իրականացում:

Կողմերը, սույն Համաձայնագրին եւ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, համագործակցություն կիրականացնեն վիճակագրության եւ իրենց գործունեության ոլորտներին վերաբերող այլ հարցերով:

ՀՈԴՎԱԾ 2

Տեղեկության փոխանակումը սույն Համաձայնագրի շրջանակում կատարվելու է Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 3

Վիճակագրական տեղեկության փոխանակումը կիրականացվի Կողմերի ունեցած կապի միջոցներով, պայմանավորված ժամկետներում՝ ըստ համաձայնեցված սխեմաների, ձեւերի եւ ցուցանիշների համակարգերի:

Տեղեկության միջգերատեսչական փոխանակման աշխատանքային լեզուն համարվում է ռուսերենը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կօժանդակեն իրենց ենթակա կազմակերպությունների, հիմնարկությունների գործունեության ընդհանուր կամ կոնկրետ ոլորտներում ուղղակի պայմանագրերի կնքմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը համատեղ կքննարկեն Համաձայնագրի մեկնաբանման եւ իրականացման ընթացքում առաջացած հիմնախնդիրները եւ կձեռնարկեն միջոցներ դրանք լուծելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում պաշտոնական պատվիրակությունների մակարդակով կքննարկի սույն Համաձայնագրի, կնքված պայմանագրերի իրականացման ընթացքը:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել, լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին միմյանց իրազեկ դարձնելու պահից:

Սույն Համաձայնագիրը կարող է չեղյալ հայտարարել Կողմերից մեկը, եւ դրա գործողությունը դադարեցվում է մյուս Կողմից դրա վերաբերյալ հաղորդում ստանալու օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

Կատարված է Կիւեւ քաղաքում 2000 թվականի սեպտեմբերի 20-ին, երկու օրինակով,

հայերեն, բելառուսերեն եւ ռուսերեն, ընդ որում, երեք լեզուներով տեքստերը
հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման
տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 1-ից: